



40. ՍԵՅՐԻ ՇԱՆԴԱՆԸ

Կար-չըկար, մե ձկնորս կար: Սաղ օրը էս մարթը ծովի կրաղից տուն չէր գալում: Հառավոտը, որ լուսը բացվում էր, վերցում էր թողը, էթում էր ձուկ բռնելու, մեկ էլ հիրկուն, որ մուծը հընգնում էր, էտ վախտ էր տուն գալում: Հիրա էրեխեքը պախում էր ձուկ բռնելով, կնիկն էլ տանում էր բազառը ծախում, բանը-ման առնում, գալում տուն, շանը կերակլում, տունը մաքրում, էլի էթում մարթի մոտը ձկան:

Օրերից մե օր էս մարթը ամեն օրվա դայդի, որ թողը վերցուց գնաց ծովը, տեսավ՝ ծովը շատ խաղաղ էր, ասավ.—Ըստեղը սաղը ա, էթամ մեշու հառեչ, թողը քցեմ խողը տեղը, լավ կըհըլնի: Գնաց, չանքի պորտը մտավ ջուրը, թողը չպրտեց ու կապից բռնեց ետ էկավ: Սկսեց քաշել: Քաշեց, քաշեց մե պստի ձուկ խանեց: էս ձուկը պստիկ ա, հըմա էնքան խորոտ ա, որ տենաս, խելքտ կէթա:

Բիձեն հիշկաց, հիշկաց, հիշկալով չէր կշտանում:

Մեկ էլ էս պստի ձուկը լեզու առավ, մարթի նման խոսաց.—Հը, ձկնո՛րս, ի՞նչ ես չիվարե, տար թն՛լ դադանը, նախաճաշ կանես, քո ամմեն օրվա սովրութկն ա:

Բիձի մազերը բիզ-բիզ հելան:

—Ա՛յ ձկների գեղեցկուհի, էս քառասուն տարի ես էս ծովից ձուկ եմ բռնում, հըմա ո՞նչ քո նման խորոտ ձուկ եմ տեսե, ո՞նչ էլ ձուկը խոսացեր ա: Հէսօրվանից իմ թեւ կողրի, իմ աչկը քոռնա, թե ես մեկ էլ ձուկ բռնեմ,—ասավ ու դանակը խանեց, թողը կղտեց, քցեց ծովը:

—Աբրուստտ կըկղրվի, բա ո՞նց կաբրես ձկնորս:

—Թո անոթի ես էլ մեռնեմ, կնիկս էլ, չունս էլ սատկի, հըմա խոսողի միա չուտեմ: էտ որ խոսում ես, նշանակում ա մարթի նման մտածում ես, խեր, մեր, քուր, ախպեր, կարող ա և սիրած ձուկ ունես, ես ընդունց աչկը ո՞նց լնլով թողեմ, գնա աբրի՛,—ասավ ու ձուկը քցեց ծովը, փողը-փոշման էկավ տունը, նիյաթը կախ նստավ:

Կնիկը բազառից էկավ, մարթին տանը տեսավ, զարմացավ.
—Մա'րթ, ի՞նչ ա պատահե, որ էկեր ես, նիյաթտ կախե, նստե:

Ոնց որ հելեր էր, մարթը պատմեց: Կնիկն էլ շիվար մնաց, էտենց բան որն էր լսացե, որն էր տեսե:

Կնիկն էլ բարի կնիկ էր, մարթին ասավ, որ. —Մա'րթ, շատ լավ ես արե, որ էտ ձուկը թալեր ես ծովը, Ասսու ստեղծած ա, թո էթա աբրի, մենք էլ տենանք, մե բան կանենք, Հո չենք մեռնի: Մե քանի մանեթ ետ եմ քցե, մե վախտ կաբրենք, թե մե գործ չըհելավ, կէթա մշակ կըդառնաս, մշակ բռնող շատ կըհըլնի: Ինչ ես վախենում, էրեխեքտ անոթի՞ր կըմնան, Աստված մեզի էրեխա չի տվե, մե չուն ունենք, մե ձի:

Հանգարց կնիկը հիչեց. —Ա՛յ մարթ, շատերը ձիան կաշկա են բանցնում, մե խամուղ ու կաշկա ա'ռ, կաշկա բանցո'ւ, հընչի՞ր մշակ դառնաս:

—Տենանք, կնի'կ, մե բան կանենք, մե խելքս թուփ անեմ, ոնց որ դում հըլնեմ, ախր զարմա՞նք ա, տեսի'լք ա, ի՞նչ ա: Էսքան տարի ոնց ենք մտե էտ խեխճերի մեխկ արնքի տակը, էտ ա է', որ Աստված մեզի մե պտուղ չըտվեց, որ մենք էլ ուրխնինք, մե տղա, մե ախճիկ էլ չըտվեց: Մեր ձինն էլ քուռակ չի բերում, չունն էլ թուլա չի բերում, մենք անիծված ենք, կնի'կ, անիծվա՜ծ, է', բոլորի պատճառը, մեղավորը ես եմ, որ բռնեցի էս ճամփեն:

—Մա'րթ, ի՞նչ ես սիրտտ կողրում, ալամ աշխարքն ա ձուկ բռնում, ձուկ ուտում, Հո մինակ մենք չե՞նք:

Մարթը ձեն չարավ, հելավ ու պարկավ քեչի վրեն: Կնիկը ճաշ պաղրաստեց, դրեց մարթի հառեչը, հըմա ճաշը կուլ չի էթում, էրկու քթալ կերավ, աման գոչտեց ետ:

—Մա'րթ, մի' տխրի ու նիյաթտ կախա, էլի գնա' սարը, համը զիբարտ կըբացվի, համ էլ իլխուց ձինը ջոկա', բե'ր, մե բանով զբաղվի', պարապ մարթը շատ ա տխրում, ես չեմ ուզում, որ դու տխրես:

—Կնի'կ, հէսօր թո հընցնի, մտածենք, տենանք:

Կնիկը մարթի խըմար էր տանջվում, որ մարթը տխուր ա: Գլխները կախուկ նստեր ին, մեկ էլ մե դառվեչ բաբա դուռը տփեց: Կնիկը վազավ, բացեց:

Դառվեչը բարև տվեց ու խառցրեց. —Քույրիկ ջա'ն, մարթտ տա՞նն ա:

—Տանն ա, դառվե'չ բաբա, համմեցե'ք:

Դառվեչը ներս մտավ, մարթին էլ բարև տվեց, մարթն ասավ.
—Դառվե'չ բաբա, նստի', նեղացուկ կըհըլնես:

Դառովեչը նստավ, խաց դրին, էս մարթի իչտա՛հը բացվավ, դառովեչի խետ լավ խաց կերավ: Կնիկը շատ ուրխցավ, որ մարթը խաց կերավ:

Դառովեչն ասավ.—Բարի՛ մարթ, ես էկեր եմ քո մոտ մե շատ կարևոր գործով, թե համաձայնվես, լա՛վ, չես համաձայնվի՛ քո գործն ա, ես քեզի վնաս չեմ տա:

—Ասա՛, դառվե՛չ բաբա, դառվեչները բարի մարթ են:

—Ո՛վ մարթ, ձկնո՛րս ախպեր, տենում եմ, որ կնիկտ էրեխա չի բերում, ձինտ քուռակ չի բերում, շունտ թուլա չի բերում, ճի՞շտ ա:

—Ճի՛շտ ա, դառվե՛չ բաբա:

—Դե որ ճիշտ ա, ընձի լսա՛: Ես քեզի կրտամ էս խնձորը, կանես չորսը կտոր, մե կտորը դու կուտես, մե կտորը՝ կնիկտ, մե կտորը կրտաս շանը, մե կտորն էլ՝ ձիանը: Կնիկտ կրբերա ջուխտ տղա, ձինտ կրբերա ջուխտ քուռակ, շունտ կրբերա ջուխտ թուլա: Թե համաձայն ես, մե տղեն, մե քուռակը, մե թուլեն ընձի տաս, խնձորը տամ, կիսե՛ք, կերե՛ք:

Մարթն էլ, կնիկն էլ համաձայնվան: Դառովեչը խնձորը խանեց կիսեց, տվեց, մարթն ու կնիկը կերան, շանը կանչին, խնձոր քցին, օթի մեչը դըջեց:

Մարթին ասավ.—էս մե կտորն էլ փաթթա՛ թղթի մեչ, դի՛ր ջբետ, գնա՛ սարը, ձինը տե՛ս, խնձորը տո՛ւր, թո ուտա, հըմա իլ-խուց չըջոկես, թո մնա իլխու մեչը:

Ոնց որ դառվեչն ասել էր, տերն էտ տեսակ էլ արավ: Եփ ժամանակն էկավ, շունը էրկու թուլա բերեց, կնիկը՝ էրկու տղա, տարին թըմմելուց ետո ձինը ջուխտ քուռակ բերեց: Թուլեքը՝ գելխեստ, տղերքը՝ քաջ, ձիանքը՝ քեյլան: Դարցան 10-12 տարեկան:

Մարթ ու կնիկ նստած խոսում ին:

—Մա՛րթ, դառվեչը չի էրևում, կարող ա մեռեր ա, Աստված դրախտի արժանացնա, մեր տղին, շունը, քուռակն էլ մեզի կըմնան: Ես դառվեչի մեռնելուն ուրախ չեմ, մարթը մեզի զավակ տվեց, հըմա տղից զրկվելը դժվար ա:

—է՛, կնի՛կ, Աստված մե ճար կանա, տենանք: Կզա դառվեչը, կըխնթրենք, կաղաչենք, որ հիրա տվածն ա, թո մեզի բախշա: Կանա՛ կանա, չի անա՛ թո տանա:

էս խոսքը հըլա չին վերչացրե, դառվեչը դուռը տփեց:

—Տանտե՛ր, պայմաններս պայման ա:

—Արի՛, դառվե՛չ բաբա, նստի՛, դինջի՛, խա՛ց կեր, մենք մեր պայմանից չենք հրաժարվի:

Դառվեչը նստավ, խոսացին: Կանչեցին տղերքին ու ասեցին, թե ոնց ա հելե հիրանց ծնվելու պատմութունը:

Պատի տղեն, որ մեշու կարճ էր, ասավ.— Հայրի՛կ, մի՛ մտածա, ես կէթամ, թո ախպերս մնա տունը:

Մեկէլ ախպերն ասավ.— Դու մա՛ց տունը, ե՛ս կէթամ:

Տվին, կռվան:

Դառավէն ասավ.— Մի՛ կռվեք, բերեք վիճակ քցենք:

Վիճակ քցին, վիճակն հընգավ պատիկին: Վազելազ գնաց, քուռակները պատիկը ջոկեց, որը արթեն 12 տարեկան ձի էր, թուլեքի պատիկը ջոկեց, որը 12 տարեկան շուն էր, բերեց դռան հառեչը:

— Դառվե՛չ բաբա, մենք պաղրաստ ենք, արի խեճի՛ ձինը, ես ու շունն էլ քո հետեից կըզանք:

Ներն ու մերը լացան, տղի հերեսները պաչին, ձիան աչկերը պաչին, փաթթվան վզով, շանը մաժեցին, փաթթվան վզով, կերակրին, ճամփու քցին: Դառվեչը խեճավ ձիանը, շունն ու տղեն վազնելով, խաղալով էթում ին: Մինչև կեսօրին գացին: Կեսօրին խասան մե տան: Դառվեչը բալնիսը խանեց, դուռը բացեց ու հիրանք ներս մտան: Հինքը ձինը կապեց դռանը: Ուետները տան մեջ ման էկավ, դուս էկան բալկոնը, էստեղ դառվեչը դարցավ ձուկ, թռավ ծովը:

Տղեն, որ էս տեսավ, զարմացավ, ասավ.— Որ դառվեչն հիրանը քցեց ջուրը, ես է պտի թռնեմ, ինչ գալում ա, գա,— ու թռավ:

Ձկները տղին դլջին, չըթողին, որ խեխտվի, ասին.— Լա՛վ տղա, ժամանակին քո խերը մեր տղին ազատեր ա, մենք էտ լավության տակից ենք դուս գալում, ա՛ռ էս շանդանը, էս օխտը մոմն ու գնա՛: Եփ սիրտտ ուզա՛, մոմը վառա՛, մե բան կըհըլնի:

Տղեն առավ, էն յանով էկավ, տեսավ շունն ու ձինը լնլում են, տղին որ տեսան, շունն էկավ, փաթթվավ տղի ոտները, ձինը ուրախ խրխնջաց:

Տղեն սրտոտ տղա էր, չէր վախենում, խեճավ ձինը, երքելով էթում էր, շունն էլ ճնջուղները խրտնցնելով հետեից վազնում էր: Ետ էկան, հըմա ճամփեն կորցրին, գացին հուրիչ երգի:

Էստեղ ըստոնց ճամփեն կորեց մե վագր, շան խետ հիրար խասան: Ծունը վագրին ձեռանց խեխտեց ու քցեց: Գացին խասան մե մեծ գետի, լենութուն՝ մե վերս: Տղեն շանը դրեց ձիան մեջքին, հինքը ձիան պոչից բռնեց, հընգան լող: Որ խասան խոռը, դժավ տեղը, շունը տեսավ ձիան բանը դժար ա, մեջքից թռավ, լող տալով իրեքն էլ դուս էկան: Տղեն ձիան թամբը վերցուց, քեչեքը չորցուց, հիրա չորերն էլ չորցուց, ձինը արածաց, խաց կերան, ճամփեն չառունակեցին:

Գացին, գացին, խասան մե տան: Դուռը տփին: Պատասխան տվող չըհեղավ: Տղեն ներս մտավ: Տեսավ՝ ստողի վրեն խաց ա դրուկ, հըմա մարթ չըկա:

Ասաւ.—Նստեմ, դինջնամ, մինչև տանտերը գա:

Ձին բակի մեջ կապեց, խոտ քցեց հառեչը, շանը խաց տվեց, հինքը խաց կերավ, պարկավ, որ հանգստանա: Մեր տղեն քնավ: Էն ժամանակ զարթնավ, որ աստղները երգնքում ձնձխկտում են, գիշերվա կեսն ա:

—Հայ, հայ,—ասավ,—իչքան եմ քնե, հայ: Տունը մուլթն էր, մե մոմ վառեց: Որ մոմը վառեց, դրեց շանդանին, շանդանի մե ճուղը պլթաց, մըչից դուս էկան 40 ախճիկ, փաթթվան տղին, մինչև լուս պարեցին ու երքեցին:

Ախճիկներից մեծն ասավ.—Տղա', բոլորս էլ հուրի-փարի ենք, որիս հետ ուզում ես, ամուսնացի', երջանիկ կաբրես:

—Ձէ',—ասավ տղեն,—հըլա իմ պսակվելու ժամանակը չի, համ էլ մեծ ախպեր ունեմ չըպսակված:

—Ի՞նչ մեծ,—ասավ ախճիկը,—դուք ջևիկ եք ծնվե:

—Ջևիկ ենք, հըմա մեծը էնի ա, բոյով ա, հավելի խելքով ա, ես էրեխա եմ:

Ախճիկները ամեն մեկը ջեբից խանեց մե քիսիկ, ամեն քիսիկի մեչը 40 ոսկի, 1600 ոսկի, տվին տղին, որ նեղութուն չըքաշա, հի-րանք մտան շանդանի պլրթած տեղով, շանդանը փակվավ, լուսն էլ բացվավ:

Էս տղեն հելավ խեճավ ձինը, շունը քցեց հետևը, գնաց: Գնաց խասավ մե բաղի: Էս բաղի մեչը աշխարքումը իչքան պտուղ կա, էստեղ էլ կա: Ձիանից հիչավ, ձին թողեց, որ արածա, հինքն էլ նստավ, որ դինջնա: Մեկ էլ տեսավ, բաղվանչին էկավ: Տեղից հե-լավ, բաղվանչուն բարև տվեց, ներողութուն խնթրեց, որ առանց իրավունքի մտեր ա բաղը, հըմա ոնչ մե բանի ձեռ չի տվեր ա:

Բաղվանչին ասավ.—Աբրե'ս, տղա', որ ձեռ չես տվե: Էս պտուղ-ների մեչը թույնավոր պտուղ էլ կա, չես ճանչնում, որ ուտիր, կը-թույնավորվիր: Հիմի հիմանում եմ, որ խորը-մոր որթի ես, ասա տենամ հո՞ւստ ես գալում, հո՞ւր ես էթում:

Տղեն բոլորը մեկ-մեկ դըսա արավ, հըմա շանդանի հունարի մասին բան չասավ:

Բաղվանչին ասավ.—Ճամփետ ծոեր ես, սխալ ես էկե, ես ցույց կըտամ, հըմա հէսոր մա'ց ընձի դոնաղ, բաղը՝ լեն, պտուղը՝ բոլ, արոտը՝ բոլ, խաց էլ, փառք Ասսուն, կա ու կա:

Տղեն համաձայնվավ, մնաց:

Հիրկունը, որ մուլթն հընգնելու ժամանակ էր, բաղվանչին բե-րեց, հաց կերան, շանը կերակրին, հելան, որ քնեն:

Տղեն ասավ.—Բաղվանչի', հըլա շուտ ա, ո՞նց քնենք:

—Տղա' ջան, ճրաք-լուս չունեմ:

—Ես ունեմ, կրվառեմ, մութը տեղ չենք մնա:

Մոմը վառեց, դրեց շանդանի վրեն: Որ մոմը շանդանի վրեն դրեց, շանդանի կողը պլթաց, էլի 40 ականիկ դուս էկան, մինչև գիշերվա կեսը խաղացին, երթեցին, պարեցին: Որ տեսավ, բիձի քունը տանում ա, մոմը փչեց, ականիկները մտան շանդանը, բոլորով մինչև լուս լավ քնան:

Դու մի ասա, էս բաղը էս երգրի թաքավորի բաղն էր:

Լուսնակ քչեր էր, թաքավորի ականիկ քունը չէր տանում, դուս էր էկե բաղի մեջը ման էր գալում: Էս բոլորը հիրա աչկով տեսավ ու մնաց զարմացած: Սերն հընգավ էս տղի վրեն. «Ինչ ուզում ա հըլնի, ես պտի էս տղին առնեմ, ի՞նչ անենք, էրեխա տղա յա: Որ էս հունարի տերն ա, էսի արժի ամեն բան»:

Ախճիկը որ տեսավ, ըստոնքը քնան, կամաց էկավ, շանդանը վերցուց ու գնաց: Տղեն առավոտը զարթնավ, ձեռը տարավ ջերը, որ շանդանը տենա: Շանդանը չըկար:

—Բիձա՛, շանդանը դո՞ւ ես վերցրե, տո՛ւր:

—Ի՞նչ շանդան, բալա՛, ես քեզանից չուտ քնա:

—Ձէ՛, որ չէ՛, շանդանս տո՛ւր:

—Այ քեզի չա՛ռ, ա՛յ տղա, քեզի դոնաղ պախեցի, որ վրես չա՞ռ անես, ես շանդանից խաբար չեմ, ընձնից վա՛ղն արի:

Էս տղեն էր տեսավ՝ բաղվանչին շատ ա երթում ուտում, հավատաց: Տղեն հազար վեց հարուր ոսկի ուներ, գնաց էս քաղաքի մեջը, մե հէժան տուն բռնեց քրեհով, աբրում էր ու ամեն օր գժի նման երթում էր, քաղաքի փողոցները ման էր գալում՝ ասելով. «Վա՛յ, շանդա՛նս, շանդա՛նս»:

Հիմի խաբարը տանք թաքավորի ականիկից:

Թաքավորի ականիկը շանդանը բերեց, մյուս հիրկունը կանչեց հիրա 40 դարավաչներին, մոմ բերեց վառեց, դրեց շանդանի վրեն, շանդանը պլթաց, շանդանից դուս էկան 41 ջահել տղա, հընգան ըստոնց ջանը մինչև լուս:

Էս խաղը թաքավորի ականիկը կրկնավ 40 օր: 40 օրից ետո գնաց խորն ասավ, որ էսենց մե զարմանալի շանդան ունի, թո պալատականներին հավաքա, հինքը շանդանը կրբերա: Թաքավորն հրաման տվեց, որ վազիր-վաքիլ, իշխաններ հավաքվեն պալատը հրաչք տենալու:

Որ բոլորը էկան, թաքավորն ականիկան ասավ, որ շանդանը բերա: Շանդանը բերին: Թաքավորն հիրա ձեռով չպիչկեն կպցուց, մոմը վառեց, դրեց շանդանին: Էս անքամ շանդանը դրոփաց, դուս էկան 40 փայլեան, չոմախները ձեռների, հընգան ըստոնց ջանը, տուր թե կըտաս:

Տվին, տվին, ինչ տուր տվին:

—Վա՛յ մեչկա, — գոռում ա թաքավորը:

—Վա՛յ գլոխս, — գոռում ա վազիրը:

Վա՛յ-վա՛յն հրնգավ պալատը: Թաքավորը տեսավ դռան հետևն հրնգուկ ա ոտները մաքրելու էծի սև փոստը, բերեց քցեց մեչկին, որ շատ չըցավա: Տալում են մեչկին, թե չէ, փոստը ղրբփում ա: Լավ դնգստելուց ետո հափկվան, մտան շանդանը: Շանդանը ստո-լի վրեն ա: Ոնչ մեկը սիրտ չի անում, շանդանին մոտ էթա, դուռը բացին, փախան, մնացին մինակ թաքավորն ու հիրան ախճիկը:

Թաքավորն ախճկան ասավ. —Ա՛ռ քո շանդանը, գնա կորի՛, էլ անչկիս չէրեասս, դու ընձի խախտառակիր իմ իշխանների հառաչ:

Ըտըրանից ետո թաքավորին ասին. —Թաքավո՛ր, էս 40 օր ա, մեր քաղաքը մե ծուռ տղա յա էկե, սաղ օրը քուչեքում ման ա գալում ու երքում. «Վա՛յ, շանդա՛նս, շանդա՛նս», էսի կարող ա ընդրա շանդանն ա, կանչա քցա՛ հիրանը, մեր աշխարքից դո՛ւս արա, թե չէ էս շանդանը մեր գլխին շատ օյին կըբերա:

Թաքավորն հրաման տվեց, տղին հուր էլ հըլնի, քթնեն բերեն: Վազան էս յան, էն յան, տղին քթան բերին:

—Տղա՛, ա՛յ լակոտ, էս շանդանը քո՞նն ա, — ասավ թաքավորը:

Տղեն, որ շանդանը տեսավ, ձեռը քցեց, շանդանը վերցուց, ոնց ա պաչում, ոնց ա պաչում:

Որ պաչեց, կշտացավ, շանդանը վառեց, թաքավորին ասավ. —Թաքավո՛ր, մեչու բերանտ քաղաքավարի բա՛ց, ոնց որ փողոցի խուժան հըլնես, ասա՛, ի՞նչ ես ուզում:

—Ուզում եմ, որ 40 ախճիկ դուս գան շանդանից, մեկը մեկէլիցը սիրուն, հուրի-փերի:

—Դե էտե՛նց ասա, էլի, հիմի մե համերգ սարքեմ:

Մոմը վառեց, դրեց շանդանին թե չէ, 40 ախճիկ դուս էկան, սկսեցին երքել ու պարել: Թաքավորի ու հիրա պալատականների բերնի ջուրը գնաց:

Որ շատ խաղացին, տղեն ասավ. —Ախճիկնե՛ր, բոլ ա, մտե՛ք շանդանը:

Բոլորը մտան շանդանը: Թաքավորի ախճիկն էկավ, որ փաթթվի էս տղին:

Տղեն ջղայնացավ, ասավ. —Կորի՛ դենը, բոզի՛ մեկը, էս 40 գի-չեր ա դու ու քո ղարավաչները փայլեանների խետ լպոտվում եք, հիմի ընձի՞ ես փաթթվում, տո բո՛գ:

Սպիչկեն վառեց, որ մոմը վառեց, դրեց շանդանին, դուս էկան 40 փայլեան՝ չոմախը ձեռներին:

—Հը, տղա՛, ասա՛, քաղաքը քանդե՞նք, թե՞ ավիրենք:

—Ո՛հնչ քանդեք, ո՛հնչ ավիրեք,—ասավ տղեն,—ըստոնցը մե
լավ դնգստե՛ք:

Էնքան տվին, թաքավորի ու վազիրների նըխտը կղրվավ: Ախճ-
կան էլ տվին, տվին, նաֆասը կղրավ, հընգավ: Բոլորը պոլին պար-
կած նոռւմ են:

—Դե, փայլեանեն՛ր ջան, էթանք:

Ոմբով գացին էն տունը, որտեղ տղեն էր աբրում: Էստեղ խե-
ձավ հիրա ձինը, շունը քցեց հետևը, շանդանը դրեց ջերը, շանդան
երքելով գնաց.

էկավ շանդանս, շանդանս,

Ղուրբան շանդանիս, շանդանիս:

Տղեն էկավ տուն: Խերը, մերը, ախպերը, չները, ձիանքը ուրա-
խութունից տոճկացին:

